ԿԱՐԾԻՔ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ ՎԱՆԻԿԻ «1903 թ. հունիսի 12-ի օրենքը և հայերի համաժողովրդական հակացարական ելույթները 1903-1905թթ.» ներկայացված Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ատենախոսության ներածությունում հեղինակը ներկայացնում է թեմայի արդիականությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ատենախոսության առարկան, նպատակը, խնդիրները, ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանությունը, գիտական ուսումնասիրվածության աստիճանն ու աղբյուրագիտական հիմքը:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել է 1903 թ. հունիսի 12-ի օրենքն ու նրա շուրջ ընթացող զարգացումները:

Ատենախության առաջին գլխում՝ «Օրենքի ընդունման պատճառները և դրա առաջին արձագանքները հայ իրականության մեջ», ներկայացվում են այն պատճառները, որոնք հանգեցրեցին հակահայ օրենքի ընդունմանը, չնայած որ ցարական արքունիքում առկա էին տարաձայնություններ օրենքի ընդունման նպատակահարմարության վերաբերյալ: Ներկայացված է օրենքի ընդունումը, դժգոհություններն ու առաջին արձագանքները հայության շրջանում:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Հայոց եկեղեցու և հայ քաղաքական կուսակցությունների պայքարը հունիսի 12-ի օրենքի դեմ» ներկայացված է հայոց եկեղեցու դիրքորոշումն օրենքի նկատմամբ, հակահայ օրենքի հաստատակամ մերժման գործընթացը, նաև քաղաքական կուսակցությունների ակտիվ ներգրավվածությունը օրենքի իրականացման դեմ մղվող պայքարին:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ վերնագրված «Հակացարական ելույթներն Արևելյան Հայաստանում և Կովկասում: 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրը» ամբողջությամբ նվիրված է հակացարական ելույթներին և հիմնախնդրի արտացոլմանը հայ մամուլի էջերում:

Անկասկած, ատենախոսության դրական կողմերից են հետևյալ բնութագրիչները. հմտակ կառուցվածք, վերնագրերի ամբողջությամբ համապատասխանությունը տեքստային շարադրանքին, մտքի պարզություն, հետևողականություն, տրամաբանական շարադրանք, պարզ ու հստակ եզրակացությունների շարք:

Անշուշտ, ատենախոսության դրական կողմերից է նաև այն, որ հեղինակը արխիվային փաստաթղթերի և գրականության հիման վրա ներկայացնում է Հայոց բազմադարյա պատմության մի կարևոր շրջափուլի զարգացումները՝ երբ հայ ժողովրդի բոլոր շերտերը համազգային հակադրություն են արտահայտում հակահայ որոշումներին,

այս փառահեղ շրջանը ազգային ինքնության, հավատքի համար մղած հետևողական պայքարի մի վառ օրինակ է, որից պետք է դասեր քաղեն հետագա սերունդները և դաստիարակվեն հայկական ինքնության հիմնասյուների համար աննահանջ պայքար մղելու անկոտրում կամքով: Այս անգամ հայության հետևողական ու անզիջում պայքարը պսակվում է փայլուն հաջողությամբ, ինչն, անշուշտ, մեծ հույսեր է ներշնչելու ընթերցողների շրջանում, դաստիարակելով նրանց պայքարի ոգով:

Այնուամենայնիվ, ատենախոսությունը մեծապես կշահեր, եթե Ռուսաստանի հայերի հանդեպ քաղաքականությունը նախ գոնե կարճ և ամփոփ տեսքով ներկայացվեր դինամիկայի մեջ, բաժանելով փուլերի՝ ըստ ժամանակագրության: Սակայն հեղինակը ընդհանրական գնահատական է տալիս Ռուսաստանի քաղաքականությանը, հիմնվելով միայն 19-րդ դարի վերջի-20-րդ դարի սկզբի փուլում տեղ գտած զարգացումների վրա, երբ կայսրությունը հոգեվարքի մեջ էր և վարում էր ակնհայտ հայահալած քաղաքականություն: Նշված փուլում հայության նկատմամբ ցարիզմի քաղաքականությանը որպես հայահալած, ինչպես նաև եկեղեցական գույքի բռնագրավման օրենքին որպես հակահայկական օբյեկտիվ և անաչառ գնահատակ տրված է արդեն իսկ խորհրդահայ պատմագրության կողմից: Սակայն հեղինակը, հիմնվելով անջատ փուլի վրա, տալիս է ընդհանրական գնահատականներ, որոնք քաղաքական ենթատեքստ են պարունակում, ինչն էլ, կարծում եմ, գիտական հավակնություն ունեցող աշխատության համար հարիր չէ:

Հեղինակը քաղաքագիտական եզրակացություններ է կատարում, որոնք իր խնդիրների շրջանակի մեջ չեն տեղավորվում և փաստարկված չեն: Օրինակ, ատենախոսության 3-4-րդ էջերին, խոսելով թեմայի արդիականության մասին, հեղինակը նշում է. «Նախորդ դարասկզբին Ռուսաստանի՝ հայ ժողովրդի հանդեպ վարվող հայաձուլման քաղաքականությունն ապացուցեց, որ իր շահերն առաջ տանելու համար Ռուսաստանը ոչնչի առջև կանգ չառավ»: Թվում էր, թե այստեղ հեղինակի ամփոփիչ խոսքը պիտի լիներ այսպես. «մենք պետք է օրինակ վերցնենք Ռուսաստանից, և նույնպես մեր շահերն առաջ տանելու համար ոչնչի առջև կանգ չառնենք»: Սակայն հեղինակը շարունակում է այլ կերպ. «Ասվածն այսօրվա համար էլ է կարևոր, որ չնայած Ռուսաստանի՝ մեր կողմից բարեկամ լինելու ընկալմանը, նա վերջին արցախյան պատերազմում առաջնորդվեց նախ և առաջ իր քաղաքական նպատակադրումներով»: Սա քաղաքագիտական սխալ եզրակացություն է, քանի որ վերջին արցախյան պատերազմում Ռուսաստանը, ցավոք, ինչ-ինչ պատճառներով չկարողացավ առաջնորդվել իր սեփական շահերով, այլապես ամբողջական և հետևողական օգնություն կցուցաբերեր հայկական կողմին: Չէ՞ որ ակնհայտ է, որ հայկական կողմի պարտությունը այս պատերազմում հանգեցրեց թուրքական դիրքերի բարելավմանը, զուգահեռաբար նաև ռուսական դիրքերի թուլացմանը տարածաշրջանում: Սակայն այս քննարկումը մեզ տանում է քաղաքագիտության տիրույթ, ինչը ատենախոսության շրջանակներում հայտարարված խնդիրներից շեղում է նշանակում: Հետևաբար, այն հատվածներում, երբ հեղինակը շեղվում է պատմագիտական նյութից և քաղաքագիտական վիճելի եզրակացություններ է կատարում, հարվածում է բուն ատենախոսության գիտական օբյեկտիվությանը: Այնուամենայնիվ, նշվածը չի նսեմացնում ատենախոսության արժեքը:

Հաշվի առնելով, ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄԿՐՏԻՉ ՎԱՆԻԿԻ «1903 թ. հունիսի 12-ի օրենքը և հայերի համաժողովրդական հակացարական ելույթները 1903-1905թթ» ատենախոսության մասին վերոնշյալ կետերը, կարծում ենք, որ այն համապատասխանում է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհելու պահանջներին և բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս

պ. գ. թ. Թ. Ռ. Վարդանյան

Թամարա Ռազմիկի Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի

գիտական քարտուղար՝ Ս. Հ. Իսկաջյան